ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-21/17 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով բենզինի/պրեմիում/ գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 08.07.2021թ. ժամը 12:00-ին Էլեկտրոնային գնումների e-auction համակարգի միջոցով:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արա Խաչատրյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Հարություն Մարտիրոսյան /գնահատող/

Մարիամ Պողոսյան /գնահատող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Սիմոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները
1	«ՖԼԵԾ» ՍՊԸ
2	«ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

3.1 Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Նախահաշվայի՝ գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները			
		«ՖԼԵԾ» ՍՊԸ		«ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ	
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ

1	3000000	2475000	2970000	2455000	2946000

4. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության, հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

4.1 «ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան, առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը և հայտով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

5. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ

5.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ 1-ին տեղ զբաղեցրած և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից ընտրված մասնակից ճանաչել «ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

6.Գնահատման արդյունքների մասին

6.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակցին ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխան ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Արա Խաչատրյան /նախագահ/

_____ Հարություն Մարտիրոսյան

_____ Մարիամ Պողոսյան

_____ Աննա Սիմոնյան /քարտուղար/